Հայ Դպր 3/1998 Երևան

Պարսկերեն-Հայերեն Անգլերեն Զրուցարան

Կազմեց՝ Էդ. Բաղդասարեան, Թեհրան, 1998թ

Իրանի հայ համայնքում ճանաչված անուն է Էդիկ Բաղդասարյանը (Է. Գերմանիկ): 1981 թ. նրա ջանքերով ու թարգմանությամբ լույս է տեսել «Հայոց պատմություն» երկհատորյակը, որը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար, իսկ 1984 թ.՝ «Սովորենք հայերեն» ինքնուսույցը: Այս գրքերը նշանակալի էին ոչ միայն պարսիկ մտավորականության համար, ովքեր քիչ թե շատ հետաքրքրվում եւ ուսումնասիրում են հայոց պատմությունը, մշակույթն ու լեզուն, այլեւ հայ համայնքի այն զգալի զանգվածի համար, ովքեր ավելի քան հայերենը՝ տիրապետում են պարսկերեն լեզվին: Եւ ահա այս տարի Թեհրանի «Նահիրի» հրատարակչությունը, գեղեցիկ ձեւավորմամբ՝ 5000 տպաքանակով լույս է ընծայել Էդիկ Բաղդասարյանի «Պարսկերեն-Հայերեն-Անգլերեն Զրուցարանը», որը ճիշտ ժամանակին, երբ իսկապես անհրաժեշտություն էր դարձել նման ձեռնարկը՝ դրվեց ընթերցողի սեղանին:

Զրուցարանը թեեւ հիմնականում նախատեսված է ուղեւորների համար, սակայն նկատի ունենալով Իրանի եւ Հայաստանի առեւտրատնտեսական, մշակութային ու քաղաքական հարաճուն հարաբերությունները՝ նման ձեռնարկի կարեւորությունն ավելի է մեծանում ու արժեւորվում:

Զրուցարանը՝ ինչպես ասվում է առաջաբանում, իր օրինակով առաջին փորձն է, քանզի ընդգրկում է երեք լեզուների՝ հայերեն, պարսկերեն եւ անգլերեն ավելի հաճախակի օգտագործվող բառեր, նախադասություններ եւ դարձվածքներ: Եւ «...այն բառերն ու դարձվածքները, որոնց կարիք են զգալու օգտագործել մասնավորապես ուղեւորները, սակայն դա օգտագործելի է նաեւ բոլոր նրանց համար, ովքեր ցանկություն ունեն սովորել երեք լեզուները: Զրուցարանի յուրաքանչյուր էջը բաղկացած է երեք սյունակից, ամեն լեզվին հատկացնելով մեկ սյունակ»:

Զրուցարանը կազմված է ուղեւորների կողմից առօրյայում սովորաբար օգտագործվող մեկ տասնյակի հասնող անհրաժեշտ մասերից եւ ոչ պակաս անհրաժեշտ հավելվածից, ուր զետեղված են Իրանի եւ Հայաստանի համառոտ պատմությունը, երկու երկրների քարտեզները, երեք լեզուների այբուբենները, աշխարհագրական անուններ, կարեւոր ժամանակներին պատկանող նախադասություններ եւ փոքրիկ բառարան, որը ավելի ամբողջական են դարձնում զրուցարանը: Մնում է հույս հայտնել, որ անհրաժեշտ եւ արժեքավոր այս զրուցարանի տպաքանակի մի մասը կառաքվի Հայաստան՝ ի նպաստ ոչ միայն հայ ուղեւորների, այլեւ Հայաստանում օտար լեզուների ուսանողության՝ մասնավորապես պարսկերեն եւ անգլերեն լեզուների:

Էդուարդ Հախվերդյան